DOI: 10.54503/1829-4324.2024.2-221

# ՀՀ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

ԳԱՅԱՆԵ ԱՎԱԳՅԱՆ
ԼԻԱՆԱ ԱԶԱՏՅԱՆ

Հոդվածը ստացվել է՝ 20.09.24, ուղարկվել է գրախոսման՝ 04.12.24, երաշխավորվել է տպագրության՝ 13.12.24

**Ներածություն:** Անտառների, բուսածածկ տարածքների կենսաբազմազանությունը անմիջականորեն ազդում է մարդկության կյանքի և տնտեսության բոլոր ոլորտների վրա: Կենսաբազմազանության փոփոխությունը կարող է բացասական ծանր հետևանքներ ունենալ և անտառների դեգրադացիայի պատճառ հանդիսանալ, իսկ անտառների հիդրոլոգիական ռեժիմի խախտումը հանգեցնում է ջրային էկոհամակարգերի դեգրադացմանը:

Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) անտառային պետական ֆոնդը կազմում է 407 հազար հա կամ երկրի տարածքի 11.7%-ը, որից 334.1 հազար հա անտառածածկ տարածքներ են: Անտառներն օդից ակտիվորեն կլանում են ածխածնի երկօքսիդը՝ նպաստելով կլիմայի փոփոխության մեղմմանը, իսկ անտառածածկ տարածքների կրճատումը հանգեցնում է մթնոլորտում ածխաթթու գազի ավելացմանը:

ՀՀ-ում ապօրինի ծառահատումները պայմանավորված են համայնքներում աղքատության բարձր մակարդակով և փայտանյութի պահանջարկի ավելացմամբ: Անկանոն անտառահատումները բացասաբար են անդրադառնում կլիմայի փոփոխության, գլոբալ տաքացման, ջերմոցային գազերի արտանետումների վրա, միաժամանակ բարձրացնում են անտառային հրդեհների ռիսկը: Այս ամենը բացասական ազդեցություն է ունենում անտառային էկոհամակարգերի վրա, նպաստում է տեսակային կազմի փոփոխությանը, անտառների անհետացմանը, սողանքների, ձնահոսքերի, սելավների և էրոզիայի երևույթների ավելացմանը, նվազեցնում անտառների վերականգնողական կարողությունները, և այլն:

Այս խնդրի կարևորությամբ է պայմանավորված **թեմայի ընտրության արդիականությունը**:

Հետազոտության **նպատակն** է ուսումնասիրել ՀՀ-ում անտառային տնտեսության վիճակը, գնահատել առկա ռիսկերը, դրանց կառավարման հինարավորությունները և առաջարկել ռիսկերի մեղմման ուղիներ: Հետազոտության շրջանակներում դիտարկվել են հետևյալ **խնդիրները**.

- Ուսումնասիրվել է ՀՀ-ում անտառների ներկա վիճակը, գոյություն ունեցող խնդիրները և ռիսկերը,
- Տրվել են դրանց լուծման և մեղմման ուղիները,
- Ստացված արդյունքների համադրմամբ մշակվել են առաջարկություններ:

**Գրականության վերլուծություն:** Անտառային տնտեսության հիմնախնդիրներին անդրադարձել են ոլորտի մի շարք մասնագետներ, որոնց

աշխատություններում ուսումնասիրվել են առկա հիմնախնդիրները և առաջարկվել դրանց լուծման ուղիներ:

Ինչպես նշում է Ժ.Հ. Վարդանյանի Հայաստանում բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների ընտրության և առանձնացման գործնական ուղեցույց՝ մեր երկրի անտառածածկ տարածքներն անհավասարաչափ են բաշխված: Անտառների 62.5 %-ը (207000 հա) գտնվում են հյուսիս-արևելյան, 13.5 %-ը (45000 հա)՝ կենտրոնական, 2.4 %-ը (8000 հա)՝ հարավային և 21.6 %-ը (72000 հա)՝ հարավ-արևելյան շրջաններում:[1]

Ըստ Ա.Ս. Իլյինցևի և Ա.Պ. Բոգդանովի «անտառների վերականգնման աշխատանքները շատերի ուշադրության կենտրոնում են, քանի որ դրանք կարող են լինել կլիմայի փոփոխության խնդրի լուծման մի մասը: Սակայն հարկ է նշել, որ միայն արհեստական տնկարկների ստեղծումը բավարար չէ կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունը դանդաղեցնելու և մեղմելու համար»:[2]

Անդրադառնալով անտառների կարևորությանը՝ Ն.Ա. Մաիսեևը նշում է, որ «անտառները հանդիսանում են կենսոլորտի կարևորագույն էկոլոգիական ոլորտ, կայունացնում են բազմաթիվ բնական գործընթացներ, կարգավորում են մթնոլորտի գազային բաղադրությունը, պահպանում են ջրի և օդի մաքրությունը, պաշտպանում են երկիրը ջրի և քամու էրոզիայից: Հայտնի է, որ գետերի հիդրոլոգիական ռեժիմը և հողածածկույթը կախված են անտառածածկույթից և անտառների որակից»:[3]

Ա.Ի. Բոնդարևը և Օ.Յա. Սայադյանը կարևորում են «անտառների գույքագրման ազգային համակարգի ներդրումը, որը հիմնված է մշտական դիտակետերի ցանցի վրա և թույլ կտա պետական մակարդակով իրականացնել անտառային ֆոնդի փոփոխությունների պարբերական մոնիտորինգ: Անտառների գույքագրման ազգային համակարգի ստեղծման նպատակն է պարբերական հիմունքներով ստանալ վիճակագրորեն հավաստի որակական և քանակական տեղեկատվություն երկրի անտառների մասին, ներառյալ անտառային էկոհամակարգերում ածխածնի քանակի և ջերմոցային գազերի հաշվառումը՝

[1] Վարդանյան, Ժ. և ուրիշներ - Հայաստանում բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների ընտրության և առանձնացման գործնական ուղեցույց:- Եր., Էդիթ Պրինտ, 2016. 124 էջ file:///C:/Users/User/Desktop/ԹԵՄԱ/7,2/ՀՀ%20ԱՆՏԱՌՆԵՐ.pdf

[2] Ильинцев, А., Богданов, А., Третьяков, С., Коптев, С., Кобылина, Т., Совершенствование системы лесовосстановления с целью сокращения периода для восстановления лесов в качестве поглотителей $CO_2$. II Всероссийская научно-практическая конференция «Экологические аспекты современных технологий в химико-лесном комплексе» г. Архангельск, 16-17 мая 2024 г. стр. 44-45 https://ecoconf.appm.ru/d/document-08.pdf

[3] Моисеев, Н., Роль лесов в создании экологически комфортной среды обитания и меры для ее реализации file:///C:/Users/User/Downloads/rol-lesov-v-sozdanii-ekologicheski-komfortnoy-sredy-obitaniya-i-mery-dlya-ee-realizatsii.pdf

անտառային քաղաքականության և զարգացման ռազմավարության ձևակերպման նպատակով»:[4]

Ա.Տ. Ատտոկուրով անդրադառնում է «անտառների պահպանությանը և ընդգծում, որ դա անհրաժեշտ է ոչ միայն անտառտնտեսության աշխատողներին, այլև ողջ հասարակությանը: Դրա համար անհրաժեշտ է ապահովել լիարժեք համագործակցություն բոլոր շահագրգիռ կողմերի միջև: Հատկապես կարևոր է գիտական հանրության ներկայացուցիչների ներգրավումը, ինչը կօգնի կազմել էկոլոգիական իրավիճակի իրական և ճշգրիտ պատկերը:»[5]

**Վերլուծություն:** Անտառների. գետերի, բուսածածկ տարածքների, կենսաբազմազանության պահպանությունը ազդում է կյանքի բացարձակապես բոլոր ոլորտների վրա: Կենսաբազմազանության մի փոքր մասի ոչնչացումը կամ նույնիսկ փոփոխությունը կարող է ունենալ բացասական ծանր հետևանքներ: Կանաչ տնտեսությունը կայուն զարգացման նպատակներից բխող բաղադրիչ է և այդ համատեքստում կարևոր տեղ է զբաղեցնում անտառային տնտեսությունն իր բազմաֆունկցիոնալ բնույթով:

Տնտեսական բազմաթիվ խնդիրներ ետ են մղում անտառների պահպանման կարևոր խնդիրը, որը բերում է կլիմայի գլոբալ փոփոխության և կարող է բնական աղետների պատճառ դառնալ: Խնդրի լուծման համար անհրաժեշտ են հետևյալ միջոցառումները.

- անտառահատումների դադարեցումը և անտառների պահպանումը,
- դեգրադացված հողերի վերականգնումը և ագրոանտառային տնտեսության ընդլայնումը,
- անտառների կայուն օգտագործումը և կանաչ արժեշղթաների կառուցումը:

ՀՀ –ում բնական աղետները խաթարում են կենսապահովման միջոցները և էլ ավելի են կրճատում կլիմայի փոփոխության հետևանքների մեղմման և դրան հարմարվելու արդեն իսկ սահմանափակ կարողությունները: Դա կարող է հանգեցնել անվերջ ցիկլի, որը կարող է սպառնալ Հայաստանի գյուղատնտեսության ոլորտին, էկոլոգիային և ենթակառուցվածքներին: Սակայն Հայաստանն ունի այդ աղետների ռիսկերը նվազեցնելու հնարավորություն անտառների շնորհիվ:[6]

ՀՀ-ում անտառային պետական ֆոնդը կազմում է 407 հազար հա կամ երկրի տարածքի 11.7%-ը, որից 334.1 հազար հա անտառածածկ տարածքներ են:

Հանրապետությունում անտառների արդյունավետության միջին ցուցանիշը 3.6 բոնիտետ է (անտառներում հողային պայմանների բերրիության

---

[4] Бондарев, А., Саядян О., Задачи и перспективы развития инвентаризации лесов армении, стр. 30,32. file:///C:/Users/User/Downloads/Bondarev_Sayadyan_art_2019.pdf

[5] Интегрированные подходы в сохранении биоразнообразия ст.123-124 https://dergipark.org.tr/tr/download/article-file/819763

[6] Անտառների պահպանումն առանցքային է Հայաստանի կլիմայական նպատակների և տնտեսական կայունության համար, https://www.worldbank.org/hy/news/feature/2021/06/07/preserving-forests-is-key-to-armenia-s-climate-goals-and-economic-sustainability

չափանիշ՝ արտահայտված ծառերի աճով, պայմանավորված դրանց հասակով, լրիվությամբ, կազմով, ձևով, ծագումով (սերմնային, վեգետատիվ), որոշում են համապատասխան հասակում՝ ծառերի միջին բարձրությամբ:), միջին լրիվությունը՝ 0.55 (մեկ լրիվություն ընդունվում է լրիվ միակցված տնկարկը), բնափայտի միջին պաշարը կազմում է 125 մ³/հա, տարեկան միջին աճը՝ 1.3 մ³/հա:[7] Հայաստանի տարածքի ընդամենը 1/10-ը զբաղեցնող անտառները հարուստ են բուսաբանական 118 ցեղի, 54 ընտանիքի պատկանող ծառերի ու թփերի 323 տեսակներով: Հայաստանի դենդրոֆլորայում էնդեմիկ տեսակների ցուցանիշը կազմում է 9%, և ներկայացված է 28 տեսակներով:[8]

Անտառներում հանդիպում են 274 տեսակի աբորիգեն ծառեր ու թփեր, որոնցից էնդեմ ծառերն ու թփերը կազմում են 25 տեսակ, իսկ ռելիկտային տեսակները՝ 31:

Քանի որ կլիմայի պահպանման տեսանկյունից անտառները կարևոր դեր են կատարում, հանդիսանալով ածխածնի երկօքսիդի կլանիչ և պահպանիչ և անտառածածկ տարածքների կրճատումը բերում է մթնոլորտում ածխաթթու գազի ավելացմանը, ապա ելնելով կլիմայի փոփոխության տեսանկյունից անհրաժեշտ է լուծել հետևյան հիմնախնդիրները.

- կիրառել միջոցառումներ՝ ուղղված անտառային էկոհամակարգերի հնարավոր խոցելիության մեղմմանը,
- կրճատել անտառների ընդհանուր կենսազանգվածի և պաշարների կորուստնե-ը:

Անտառային կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման անհրաժեշտությունը պայմանավորված է անտառային էկոհամակարգերի բնապահպանական ֆունկցիաների կարևորությամբ, որոնցից են.

ա) ածխածնի երկօքսիդի կլանում և կլիմայի կարգավորում,
բ) հողի էրոզիայի և անապատացման կանխում,
գ) ջրային հաշվեկշռի կարգավորում,
դ) գենետիկական նյութի մատակարարում,
ե) ռեկրեացիոն ծառայությունների տրամադրում,
զ) միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակի բարելավում և այլն:[9]

Անտառային հողերի նպատակային նշանակության փոփոխումը, բնափայտի գերհատումները, անտառային հրդեհները անտառների դեգրադացիայի պատճառ են հանդիսանում: Իսկ անտառների հիդրոլոգիական ռեժիմի խախտումը հանգեցնում է ջրային էկոհամակարգերի դեգրադացմանը:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ՀՀ անտառային, մասնավորապես՝ անտառածածկ հողային տարածությունները, ապօրինի

---

[7]Անտառային տնտեսություն, http://old.minagro.am/

[8] https://www.wikiwand.com/hy

[9] ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ անտառի ազգային ծրագիրը հաստատելու մասին, 20 օգոստոսի 2005թ., N 1232-Ն https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=14277

անտառահատված ծառերի քանակը, ինչպես նաև հրդեհների արդյունքում վնասված տարածքները:

Աղյուսակ 1

ՀՀ անտառապատ տարածքները, ապօրինի անտառահատումների և հրդեհների հետևանքով կորուստները[10]

| Տարեթվերը | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Անտառային հողեր, 1000 հա. | 334,2 | 334,3 | 334,3 | 334,2 | 334,1 | 334,1 | 334,0 | 334,9 | 334,0 | 334,0 | 333,9 |
| Անտառածածկ հողեր, 1000 հա | 289,3 | 289,4 | 289,5 | 289,3 | 289,3 | 289,2 | 289,2 | 289,0 | 289,2 | 289,2 | 289,1 |
| Ապօրինի հատված ծառերի քանակ | 194 | 179 | 231 | 615 | 513 | 30720 | 12821 | 7228 | 12978 | 18674 | 17193 |
| Հրդեհված անտառածածկ տարածք, հա | 170,4 | 39,4 | 28,1 | 89,7 | 37,0 | 1.111,8 | 239 | 1.881,0 | 342 | 890 | 1.099,0 |

Աղյուսակ 1-ի տվյալներից երևում է, որ ապօրինի հատումների և հրդեհների հետևանքով գրանցվել են բավականին մեծ կորուստներ:

Ապօրինի ծառահատումները պայմանավորված են համայնքներում աղքատության բարձր մակարդակով և փայտանյութի պահանջարկի ավելացումով: Անկանոն անտառահատումները հանգեցնում են կլիմայական պայմանների փոփոխության և հրդեհավտանգության բարձրացման: Անտառների գերշահագործումը, անկանոն հատումները կրճատում են անտառային տարածքները, տեղի է ունենում տեսակային կազմի, կառուցվածքի փոփոխություններ, արժեքավոր տեսակների թվի նվազում, բուսական և կենդանական պոպուլյացիաների կրճատում: Ներկայումս Հայաստանի բնական անտառների մոտ 70%-ը կազմալուծված ու ծերացած են:

[10] ՀՀ ՎԿ , Տարեգիրք, Շրջակա միջավայր և բնական պաշարներ, 2013-2023թթ.

Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում անտառներն ունեն ջրապաշտպան ֆունկցիա: Անտառահատումների արդյունքում փոխվում է գետերի հունը, որի հետևանքով ունենում ենք ջրի կորուստ: Անտառները պահպանում են աղբյուրները, վտակները և գետակները գոլորշացումից: Հետևաբար անտառների անօրինական հատումները հանգեցնում են աղբյուրների ցամաքելուն, իսկ ինչպես հայտնի է խմելու ջուրն աշխարհում համարվում է ամենաթանկ և կենսական անհրաժեշտ ռեսուրսը, և ջրերի կորուստը Հայաստանում էկոլոգիական և ազգային անվտանգության խնդիր է:

Վերջին հարյուրամյակում մարդու տնտեսական գործունեության հետևանքով Հայաստանի անտառների տարածքը կրճատվել է, ընկել է անտառների արտադրողականությունը և պաշտպանական ունակությունը: Անտառածածկ տարածքի ընդարձակման, էրոզացված լեռնալանջերի անտառբարելավման նպատակով Հայաստանում կատարվում են արհեստական անտառատնկումներ:

Նոր անտառների հիմնման և եղածների վերականգման համար անհրաժեշտ են հիմնել նոր տնկարաններ:

«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը, համագործակցելով «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի և «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամի հետ, Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար.Կանաչ համայնք՝ դիմակայուն ապագա» ծրագրի շրջանակում, 2021թ.-ի մարտի 1-ից, երեք համայնքներում՝ Տավուշի, Լոռու և Շիրակի մարզերում իրականացնում է մի ծրագիր, որի նպատակն է ավելացնել համայնքներում տնամերձ տնկարանների քանակը, հիմնել 150 տնամերձ տնկարաններ, որոնք կմատակարարեն տարեկան մինչև 200,000 տնկի:[11]

Նույն ծրագրի աջակցությամբ Շիրակի մարզում բացվեց առաջին տնկարան-ջերմատուն: Մարզի ընտրությունը կապված է տարածաշրջանում անտառների սակավության հետ: Գյումրու սելեկցիոն կայանը՝ շուտով քաղաքային և գյուղական համայնքներին կտրամադրի տնկիներ՝ ինչպես զբոսայգիների և պուրակների, այնպես էլ անտառների հիմնման համար: Աճեցված տնկիները համայնքներին կտրամադրվեն անհատույց, իսկ անհատ տնտեսվարողներին՝ մատչելի գներով:

Հայաստանը կլիմայական առումով ամենախոցելի երկրների շարքում է, հետևաբար, Կլիմայակայուն աճի կարևորումն ու կայուն «կանաչ» քաղաքականություններին ու բիզնես աշխատակարգերին հետամուտ լինելը, հատկապես անտառտնտեսության ոլորտում, շատ կարևոր է Հայաստանի ապագայի համար: Շատ ավելին է անհրաժեշտ անել երկրի անտառածածկ տարածքները պահպանելու համար: Արագ աճող վառելափայտի տնկարկները գյուղական հողատերերի համար պոտենցիալ տարբերակ են նրանց եկամտային

[11] «Էյ Թի Փի», https://tavushmedia.am/hy/tnamerdz-tnkaranner-himnelu-phokhr-dramashnorh-dimelu-verjnazhamkeeh-22-eh-hoktember-2022-th/

աղբյուրների դիվերսիֆիկացման առումով: Այդօրինակ ձեռնարկումները նաև կնպաստեն, որ Հայաստանում նվազի վառելափայտի չափազանց մեծ պահանջարկով պայմանավորված ճնշումը բնական անտառների վրա:

Աղյուսակ 2

2012-2023թթ, <<Հայանտառ>> ՊՈԱԿ <<անտառտնտեսություն>> մասնաճյուղերում անտառմշակույթների հիմնադրման աշխատանքների ծավալները[12]

| Աշխա-տանքի անվա-նումը | Տարիները | | | | | | | | | | | | Ընդամենը 2012-2023թթ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 | |
| Տնկում, հա | 43.8 | 205.0 | 33.0 | 75.2 | 32.9 | 58.4 | 62.5 | 160.0 | 116.0 | 133.0 | 171.3 | 344.2 | 1435.3 |
| Ցանքս, հա | - | - | 15.0 | - | - | - | 17.0 | 12.0 | 10.0 | - | - | - | 54.0 |
| Ցանքս և տնկում | 62.0 | 59.8 | - | - | - | 61.9 | - | - | - | - | - | - | 183.7 |
| Ընդա-մենը | 105.8 | 264.8 | 48.0 | 75.2 | 32.9 | 120.3 | 79.5 | 172.0 | 126.0 | 133.0 | 171.3 | 344.2 | 1673.0 |

Կանաչ տնտեսության անցնելու գործընթացում անտառային ոլորտը պետք է լինի առաջատար:: Այնուամենայնիվ, այս ոլորտին դեռևս առաջնահերթություն չի տրվել կայուն զարգացման ազգային ռազմավարական ծրագրերի մեծ մասում: Անտառային հատվածի կարևոր դերը կանաչ տնտեսության մեջ պետք է խթանվի՝ մաքուր ջրի և սննդի, վերականգնվող

[12] Տվյալները ըստ <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ի

էներգիայի և աղքատության նվազեցման մարտահրավերների համար: Հետևաբար անհրաժեշտ է.

- բարձրացնել հասարակության բոլոր հատվածների իրազեկվածությունը անտառային հատվածի ներուժի և դրա առջև ծառացած մարտահրավերների մասին,
- նպաստել Կանաչ տնտեսության համար անտառտնտեսության գործողությունների ծրագրի իրականացմանը:

ՀՀ –ում անտառտնտեսության հիմնական սպառնալիքները հետևյալներն են.

- վառելիքի և փայտանյութի արտադրության համար ապօրինի հատումները,
- անասունների վատ կարգավորվող արածեցում և անասնակերի նախապատրաստում,
- ենթակառուցվածքների զարգացում և հողազավթում,
- անկայուն զբոսաշրջություն,
- անտառների պատասխանատու կառավարման սկզբունքների մասին տեղական բնակչության, բիզնեսի և ընդհանուր առմամբ հասարակության անբավարար տեղեկացվածությունը,
- կլիմայի փոփոխություն:

Թվարկված վտանգները, կհանգեցնեն տեսակների կազմի փոփոխությանը և վերականգնողական կարողությունների նվազմանը, անտառների անհետացմանը, սողանքների, ձնահոսքերի, սելավների և էրոզիայի երևույթների թվի ավելացմանը և այլն:

Հաշվի առնելով անտառների նշանակության և դերի կարևորությունը կենսաբազմազանության պահպանման գործում, ՀՀ Կառավարության կողմից 2005թ. ՀՀ անտառային օրենսգրքում և 2023թ.-ին օրենքում կատարված լրացումներում և փոփոխություններում՝ առանձին կետերով կարևորվում է կենսաբանական բազմազանության պահպանությունը:[13]

Մի շարք երկրներում՝ ինչպիսիք են ԱՄՆ-ն, Չինաստանը, Ֆինլանդիան, Բրազիլիան, Չիլին, Կոլումբիան, Մեքսիկան, Արգենտինան, անտառային տնտեսության կառավարումը իրականացվում է մասնավորի կողմից, իսկ պետությունն իրականացնում է կարգավորման և վերահսկողության գործառույթներ: Կառավարման այս տեսակն իրականացվում է մի շարք սկզբունքների հիման վրա, ինչպիսիք են՝ անտառների սեփականության իրավունքը, օգտագործումը և վերարտադրումը: Կանադայում, Գերմանիայում, Նորվեգիայում, Ավստրիայում անտառների կառավարումն իրականացվում է Կարգավորված շուկայական

[13] ՀՀ Անտառային օրենսգիրք գ լ ու խ 7, հոդված 18, ընդունված է 2005 թվականի հոկտեմբերի 24-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=21354, ՀՀ ՕՐԵՆՔԸ ՀՀ Անտառային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, ընդունվել է 22.11.2023, http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=8970&lang=arm

հարաբերությունների պայմաններում՝ պետության և ձեռնարկությունների շահերի հավասարակշռությամբ:

Բյուջետային ֆինանսավորմամբ անտառաբուծության գործունեության կենտրոնացված պլանավորված համակարգը կիրառվում է միայն սոցիալիստական ուղղվածություն ունեցող որոշ երկրներում, ինչպիսիք են Կուբան և Մոնղոլիան:

Գերմանիայում անտառների տարածքները կազմում են ընդհանուր տարածքի 31%-ը և զբաղեցնում է մոտ 11,1 մլն հա.: Ներկայումս անտառների մոտ 43,6%-ը մասնավոր սեփականություն է, որի 11,9%-ն ունի 1000 հեկտարից ավելի տարածք:[14]

Գերմանիայում փոքր անտառների սեփականատերերն աջակցություն են ստանում պետական անտառային ձեռնարկություններից և Դաշնության ան-տառների կառավարման նահանգային մարմիններից՝ խորհրդատվական և անտառների կառավարման ծառայությունների տեսքով:

Կանադայի տարածքի 45%-ը (417,6 մլն հեկտար) ծածկված է անտառներով, որից 71%-ը կառավարվում է նահանգային կառավարությունների, 23%-ը՝ դաշնային և տարածքային իշխանությունների կողմից, և միայն 6%-ն է մասնավոր սեփականություն:[15]

Կանադայի անտառային օրենսդրությունը, որը կարգավորում է անտառների կառավարման և անտառվերականգնման կազմակերպումը, ընդգրկված է երկրի օրենսդրությունում և ներառում է հետևյալ իրավական ակտերը՝ Կանադայի սահմանադրությունը (Constitution of Canada)[16], Անտառների մասին օրենքը (Forestry Act)[17], Հողի մասին օրենքը (Land Act)[18], Անտառների վերականգնման մասին օրենքը (Forest Renewal Act)[19], Անտառների արգելանոցների մասին օրենքը (Forest Land Reserve Act)[20], Անտառային

---

[14] Оценка зарубежного опыта лесоуправления, Современные наукоемкие технологии. – 2014. № 7 (часть 1) – С. 144-146 https://top-technologies. ru/ru/article/view?id=34239

[15] Николайчук, А. А., Николайчук, О. А. - Зарубежный опыт государственного регулирования лесных ресурсов file:///C:/Users/User/Downloads/zarubezhnyy-opyt-gosudarstvennogo-regulirovaniya-lesnyh-resursov.pdf

[16] Constitution Act of 1982 (Canada Act): approved by the British Parliament on March 25, 1982, and proclaimed by Queen Elizabeth II on April 17, 1982 [Electronic resource]. URL: http://laws-lois.justice.gc.ca/eng/Const/ (дата обращения 20.04.2012г.)

[17] Forestry Act (R.S.C., 1985, c.F-30) // Department of Justice Canada [Electronic resource]. URL:http://laws-lois.justice.gc.ca/eng/acts/F-30/FullText.html (дата обращения 20.04.2012г.)

[18] Canada Lands Surveys Act (R.S.C., 1985, c.L-6) // Department of Justice Canada [Electronic resource]. URL: http://laws-lois.justice.gc.ca/eng/acts/L-6/FullText.html (дата обращения 20.04.2012г.)

[19] Forest Renewal Act // Food and agriculture organization of the United Nations [Electronic resource]. URL: http://faolex.fao.org/docs/html/bc10984.htm (дата обращения 20.04.2012г.)

[20] Forest Land Reserve Act // Food and agriculture organization of the United Nations [Electronic resource].URL:http://faolex.fao.org/cgi-

տնտեսության և արոտավայրերի նախարարության օրենքը (Ministry of Forestsand Range Act)[21] :

Անտառային տնտեսության և արոտավայրերի նախարարության օրենքը լիազորում է Անտառային ծառայությանը կառավարելու մարզի անտառները և արոտավայրերը: Այն տվյալ գործակալությանը տալիս է լայն լիազորություններ՝ խթանելու ռեսուրսների արտադրողականության բարձրացումը և պատասխանատու կառավարումը՝ կարճաժամկետ և երկարաժամկետ սոցիալական արդյունքների հասնելու համար: Անտառների վերարտադրության կառավարման տնտեսական մեթոդները հիմնված են անտառային վճարների և հարկերի վրա:

ԱՄՆ –ում անտառների 70%-ը մասնավոր սեփականություն է, իսկ մնացածը ազգային (պետական) անտառներ են կամ անտառային արգելոցներ: ԱՄՆ-ում ազգային անտառները կառավարվում են Անտառային դաշնային ծառայության կողմից, որը ֆինանսավորվում է պետական բյուջեի 2/3-ով: Պետական անտառների փայտանյութի իրացումից ստացված եկամուտը միշտ չէ, որ ծածկում է անտառտնտեսության կառավարման ծախսերը և այն փոխհատուցվում է գանձապետարանի հաշվին:

Եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը արտահայտվում է հետևյալ հարաբերակցությամբ՝ P + A = Злз+Злх,, (1) որտեղ P-ն վարձավճար է. A – բյուջետային հատկացումներ; Злз - անտառահատումների ծախսեր; Злх – անտառտնտեսության կառավարման ծախսեր: [22]

Այս հարաբերակցությունը ցույց է տալիս, որ Անտառային ծառայությունը շահագրգռված է փայտանյութի վաճառքից ստացվող եկամուտների ավելացմամբ: Անտառային ծառայությունը փայտանյութի իրացումից ստացած եկամուտի համար ամեն տարի հաշվետվություն է ներկայացնում հարկատուներին, Կոնգրեսին և նախագահին: ԱՄՆ Անտառային դաշնային ծառայությունը չի իրականացնում արտադրական և անտառային գործունեություն, այլ այդ նպատակով պայմանագրային հիմունքներով ներգրավում է կապալառուների: Եկամուտի 60-70%-ը մնում է Անտառային ծառայության հաշվին, որը օգտագործվում է անտառվերականգնում, հրդեհների, վնասատուների և հիվանդությունների դեմ պայքար, նոր տեխնիկայի ձեռքբերում, ճանապարհների կառուցում և այլն նպատակներով: Մնացած 30-40%-ը փոխանցվում է դաշնային բյուջե, որի 25%-ը օգտագործվում է տվյալ նահանգի

bin/faolex.exe?recid=007395&database=FAOLEX&searchtype= link&table= result&lang=eng&formatname=@ERALL.htm (дата обращения 20.04.2012г.)

[21]. Ministry of Forests and Range Act // Food and agriculture organization of the United Nations [Electronic resource]. URL: http://faolex.fao.org/docs/html/bc53077.htm (дата обращения 20.04.2012г.)

[22] Brad Smith W., Miles D. Patrick, Vissage S. John Forest resources of the United States, 2002. St. Paul, Minnesota: U.S. Department of agriculture, 2004 20. State of Finland's forest 2011 / Forest research institute (Metla), Ministry of agriculture and forestry. 2011

սոցիալական ոլորտի զարգացման նպատակով: ԱՄՆ-ում ներկայումս գործող ֆինանսավորման համակարգը նպաստում է առողջ անտառային էկոհամակարգերի ստեղծմանը՝ պահպանելով նրանց կենսաբազմազանությանը:

Ֆրանսիայում անտառները զբաղեցնում են երկրի տարածքի 31%-ը, կամ մոտ 17 միլիոն հեկտարը: Երկրում անտառների պահպանման համար պատասխանատու է Ազգային անտառտնտեսության գրասենյակը (ONF), որի գործունեության նպատակն է պահպանել եղած կապիտալը՝ չհատելով անտառների բնական աճից ավելին և մեծահասակ ծառերը փոխարինել նոր տնկիներով: Ֆրանսիայում նախընտրում են անտառների բնական վերարտադրությունը: Անտառների վիճակի վերահսկողությունն իրականացվում է Աշխարհագրական և անտառային տեղեկատվության ազգային ինստիտուտի (IGN) հետ համատեղ: Անտառը դիտարկելու և վերահսկելու համար օգտագործվում են նոր տեխնոլոգիաներ՝ արբանյակներ, ինքնաթիռներ, անօդաչու թռչող սարքեր: Նրանք ունեն երեք առավելություն.

- ցանկացած կայքի հասանելիություն,
- որոշակի ժամանակահատվածում ուսումնասիրված շատ ավելի մեծ տարածք,
- տվյալների շատ ավելի հաճախակի թարմացում:

Ֆրանսիայում հանրային անտառների կառավարման ընդհանուր սկզբունքը բազմաֆունկցիոնալ կառավարումն է, որն աշխարհում գերիշխող մոդել չէ:: Հարկ է նշել նաև, որ անտառների բնական տարածքների կենսաբազմազանությունը պահպանելու նպատակով Ֆրանսիայում հաճախ հրաժարվում են ծերացած ծառերով տարածքներում անտառահատման աշխատանքներից:

Շվեդիայում 27,3 մլն հեկտարը զբաղեցնում է անտառային հողերը: Անտառային տնկարկների 50%-ը մասնավոր սեփականություն է. որը միջինում կազմում է 50 հեկտար: Անտառների 40%-ը պատկանում է Շվեդիայի յոթ խոշորագույն ընկերություններին, իսկ մնացած 10%-ը պետական, քաղաքային և եկեղեցական սեփականություն է: Անտառային պետական քաղաքականության տնտեսական գործիքը՝ սուբսիդիաները, օգտագործվում են միայն շրջակա միջավայրի պահպանության նպատակով: Տնտեսության անտառային հատվածի պետական կարգավորումը սահմանափակվում է անտառների էկոլոգիական վիճակի մոնիտորինգով՝ դրանց կանոնավոր գույքագրման միջոցով: Անտառի սեփականատիրոջ հետ կնքվում է պայմանագիր անտառային տարածքների օգտագործման համար, որտեղ նշվում է նաև փայտանյութի վաճառքի գինը: Շվեդիայում հարկերի դրույքաչափերը բավականին բարձր են՝ անտառային արդյունաբերությունում դրանք հասնում են շրջանառության մինչև 40%-ին, այսինքն՝ անտառի օգտագործումից ստացված եկամտից հարկվող հարկերը հավասարեցված են ցանկացած այլ եկամտի հարկերին: Դա հնարավոր է դառնում բարձրորակ արտադրանքի արտադրության և անտառների արդյունավետ կառավարման գործում զգալի ներդրումների, ինչպես նաև անտառային համալիրի կառավարման համար բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման շնորհիվ:

Ռուսաստանում անտառածածկ հողերի տարածքը գնահատվում է գրեթե 800 միլիոն հեկտար, ինչը կազմում է աշխարհի անտառների մեկ հինգերորդը: Անտառներում փայտի պաշարները գերազանցում են 83 մլրդ մ³-ը: Չնայած անտառօգտագործման բազմաֆունկցիոնալ բնույթն ամրագրված է Ռուսաստանի Դաշնության Անտառային օրենսգրքում, մասնավոր բիզնեսը միայն վերջերս է հետաքրքրություն ցուցաբերել անտառային ռեսուրսների ինտեգրված օգտագործման նկատմամբ: Անտառային օրենսգիրքը հռչակում է նաև անտառների բազմաֆունկցիոնալ, ռացիոնալ, շարունակական, ոչ սպառիչ օգտագործումը ապահովելու սկզբունքը: Փայտահավաքի հետ կապված անտառների օգտագործումը հիմնականում իրականացվում է անտառային տարածքների վարձակալության պայմանագրերի կնքման հիման վրա: Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների համար մեծ սոցիալական և տնտեսական նշանակություն ունեն անտառային պարենային ռեսուրսները և դեղաբույսերը, որոնք մեծ պահանջարկ ունեն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում:

Հիմք ընդունելով տարբեր երկրների փորձը, ՀՀ-ում անտառների կառավարումը բարելավելու համար կարող են տրվել հետևյալ առաջարկությունները.

- վերանայել և թարմացնել ազգային օրենսդրությունը,
- ներդնել անտառների կառավարման սերտիֆիկատ, օրինակ FSC սխեմայով, որը հիմնված է թափանցիկության բարձր չափանիշների վրա և նպատակ ունի խթանել անտառային ռեսուրսների պատասխանատու կառավարումն ու օգտագործումը համաշխարհային չափանիշներին համապատասխան,
- հզորացնել խթանների և տնտեսական այլ մեխանիզմների կիրառումն ու օգտագործումը ռեսուրսների կառավարման համար.
- կիրառել անտառների կայուն կառավարման համար առկա չափանիշները և անտառների կառավարման գործառնական ուղեցույցները՝ տեղական մակարդակում,
- ներդնել վճարումների համակարգ էկոհամակարգային ծառայությունների համար,
- տնտեսության տարբեր ոլորտներում որոշումների կայացումը ինտեգրել բնապահպանական ոլորտին,
- խթանել սերտիֆիկացման և պիտակավորման համակարգերի կամ ստանդարտների օգտագործումը (հատուկ շուկայավարման ծրագիր և հարթակ բիզնեսի և FSC համակարգի հաղորդակցությունների համար):

Քանի որ կենսաբազմազանության պահպանման գործում անտառների պահպանությունն ունի առաջնային նշանակություն, ոլորտում եղած խնդիրների լուծումը կարևոր է յուրաքանչյուր երկրի տնտեսության և ազգային անվտանգության համար: Ուսումնասիրելով վերոնշյալ խնդիրները, նրանց լուծման համար անհրաժեշտ է բարձրացնել հասարակության բոլոր հատվածների իրազեկվածությունը անտառային հատվածի ներուժի և դրա առջև ծառացած մարտահրավերների մասին, նպաստել Կանաչ տնտեսության

համար անտառտնտեսության գործողությունների ծրագրի իրականացմանը, իրականացնել բազմաֆունկցիոնալ կառավարումն, որը հիմնված է տնտեսական, բնապահպանական և սոցիալական բաղադրիչների հավասարակշռության վրա, պատասխանատվություն կրել շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների համար, անտառային ռեսուրսների երկարաժամկետ կամ կարճաժամկետ օգտագործումը թույլ տալ միայն համապատասխան լիցենզիա ստանալուց հետո:

**Գիտական նորույթը:** Հոդվածում ուսումնասիրվել է ՀՀ անտառների նշանակությունը կենսաբազմազանություն պահպանման գործում, ներկայացվել է մի շարք երկրների փորձը և գոյություն ունեցող խնդիրների լուծման ուղղությամբ արվել են հետևյալ առաջարկությունները .

- անտառը դիտարկելու և վերահսկելու համար օգտագործել նոր տեխնոլոգիաներ՝ օրինակ անօդաչու թռչող սարքեր
- նպաստել «Կանաչ տնտեսության» համար անտառտնտեսության գործողություն-ների ծրագրի իրականացմանը,
- իրականացնել բազմաֆունկցիոնալ կառավարումն, որը հիմնված է տնտեսական, բնապահպանական և սոցիալական բաղադրիչների հավասարակշռության վրա,
- պատասխանատվություն կրել շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների համար,
- անտառային ռեսուրսների երկարաժամկետ կամ կարճաժամկետ օգտագործումը թույլ տալ միայն համապատասխան լիցենզիա ստանալուց հետո և ներդնել անտառների կառավարման սերտիֆիկատ:

**Եզրակացություն:** Կլիմայի պահպանման տեսանկյունից անտառները կարևոր դեր են կատարում, հետևաբար նրա կենսաբազմազանության փոփոխությունը բացասաբար է ազդում կյանքի բոլոր ոլորտների վրա: Անտա-ռածածկ տարածքների կրճատումը բերում է մթնոլորտում ածխաթթու գազի ավելացմանը: Անկանոն անտառահատումները հանգեցնում են կլիմայական պայմանների փոփոխության և հրդեհավտանգության բարձրացման: Անտառային տարածքների նվազումը հանգեցնում է սողանքների, ձնահոսքերի, սելավների և էրոզիայի երևույթների թվի ավելացմանը և այլն:

Քանի որ ՀՀ-ում անտառային պետական ֆոնդը կազմում է երկրի ընդհանուր տարածքի ընդամենը 11.7%-ը, ապա անտառների պահպանությունը և դրանց տարածքների ընդլայնումը ունի կենսական նշանակություն: Իսկ անտառային տարածքների կրճատման հետևանքով առաջացած հիդրոլոգիական ռեժիմի խախտումը հանգեցնում է ջրային էկոհամակարգերի դեգրադացմանը:

Հոդվածում անդրադարձ ենք կատարել կենսաբազմազանություն պահպանման գործում անտառների դերին և նշանակությունը և արվել են առաջարկություններ առաջացած խնդիրների լուծման ուղղությամբ:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Անտառների պահպանումն առանցքային է Հայաստանի կլիմայական նպատակների և տնտեսական կայունության համար, https://www.worldbank.org/hy/news/feature/2021/06/07/preserving-forests-is-key-to-armenia-s-climate-goals-and-economic-sustainability
2. Անտառային տնտեսություն, http://old.minagro.am/
3. ԱՎԿ , Տարեգիրք, Շրջակա միջավայր և բնական պաշարներ, 2013-2023թթ.
4. ՀՀ Անտառային օրենսգիրք Գ Լ ՈՒ Խ 7, Հոդված 18, ընդունված է 2005 թվականի հոկտեմբերի 24-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=21354, ՀՀ օրենքը ՀՀ Անտառային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, ընդունվել է 22.11.2023, http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=8970&lang=arm
5. ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ անտառի ազգային ծրագիրը հաստատելու մասին, 20 օգոստոսի 2005թ., N1232-Ն https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=14277
6. Վարդանյան, Ժ.Հ. և ուրիշներ Հայաստանում բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների ընտրության և առանձնացման գործնական ուղեցույց: Եր., Էդիթ Պրինտ, 2016. 124 էջ file:///C:/Users/User/Desktop/ԹԵՄԱ/7,2/ՀՀ%20ԱՆՏԱՌՆԵՐ.pdf
7. Бондарев, А.И. Задачи и перспективы развития инвентаризации лесов армении, стр. 30,32. file:///C:/Users/User/Downloads/Bondarev_Sayadyan_art_2019.pdf
8. Ильинцев, А.С., Богданов, А.П., Третьяков, С.В., Коптев, С.В., Кобылина, Т.Н. Совершенствование системы лесовосстановления с целью сокращения периода для восстановления лесов в качестве поглотителей $CO_2$. II Всероссийская научно-практическая конференция, Экологические аспекты современных технологий в химико-лесном комплексе, г. Архангельск, 16-17 мая 2024 г. стр. 44-45 https://ecoconf.appm.ru/d/document-08.pdf
9. Интегрированные подходы в сохранении биоразнообразия ст.123-124 https://dergipark.org.tr/tr/download/article-file/819763
10. Моисеев, Н.А. Роль лесов в создании экологически комфортной среды обитания и меры для ее реализации file:///C:/Users/User/Downloads/rol-lesov-v-sozdanii-ekologicheski-komfortnoy-sredy-obitaniya-i-mery-dlya-ee-realizatsii.pdf
11. Николайчук, А. А., Николайчук, О. А. Зарубежный опыт государственного регулирования лесных ресурсов file:///C:/Users/User/Downloads/zarubezhnyy-opyt-gosudarstvennogo-regulirovaniya-lesnyh-resursov.pdf
12. Оценка зарубежного опыта лесоуправления, Современные наукоемкие технологии. – 2014. N7 (часть 1) – С. 144-146 https://top-technologies.ru/ru/article/view?id=34239
13. Brad Smith, W., Miles, D. Patrick, Vissage, S. John, Forest resources of the United States, 2002. St. Paul, Minnesota: U.S. Department of agriculture, 2004 20. State of

Finland's forest 2011 / Forest research institute (Metla), Ministry of agriculture and forestry. 2011
14. Canada Lands Surveys Act (R.S.C., 1985, c.L-6) // Department of Justice Canada [Electronic resource]. URL: http://laws-lois.justice.gc.ca/eng/acts/L-6/FullText.html (дата обращения 20.04.2012г.)
15. Constitution Act of 1982 (Canada Act): approved by the British Parliament on March 25, 1982, and proclaimed by Queen Elizabeth II on April 17, 1982 [Electronic resource]. URL: http://laws-lois.justice.gc.ca/eng/Const/ (дата обращения 20.04.2012г.)
16. Forestry Act (R.S.C., 1985, c.F-30) // Department of Justice Canada [Electronic resource]. URL:http://laws-lois.justice.gc.ca/eng/acts/F-30/FullText.html (дата обращения 20.04.2012г.)
17. Forest Renewal Act // Food and agriculture organization of the United Nations [Electronic resource]. URL: http://faolex.fao.org/docs/html/bc10984.htm (дата обращения 20.04.2012г.)
18. Forest Land Reserve Act // Food and agriculture organization of the United Nations [Electronic resource].URL:http://faolex.fao.org/cgi-bin/faolex.exe?recid=007395&database=FAOLEX&searchtype=link&table=result&lang=eng&formatname=@ERALL.htm (дата обращения 20.04.2012г.)
19. Ministry of Forests and Range Act // Food and agriculture organization of the United Nations [Electronic resource]. URL: http://faolex.fao.org/docs/html/bc53077.htm (дата обращения 20.04.2012г.)
20. «Էյ Թի Փի», https://tavushmedia.am/hy/tnamerdz-tnkaranner-himnelu-phokhr-dramashnorh-dimelu-verjnazhamkeeh-22-eh-hoktember-2022-th/

## ՀՀ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

ԳԱՅԱՆԵ ԱՎԱԳՅԱՆ
ԼԻԱՆԱ ԱԶԱՏՅԱՆ

**Համառոտագիր**

Անտառների, գետերի, բուսածածկ տարածքների, կենսաբազմազանության պահպանությունը ազդում է կյանքի բացարձակապես բոլոր ոլորտների վրա: Կենսաբազմազանության մի փոքր մասի ոչնչացումը կամ նույնիսկ փոփոխությունը կարող է ունենալ բացասական ծանր հետևանքներ: Կլիմայի պահպանման տեսանկյունից անտառները կարևոր դեր են կատարում՝ հանդիսանալով ածխածնի երկօքսիդի կլանիչ և պահպանիչ: Սակայն անտառածածկ տարածքների կրճատումը բերում է մթնոլորտում ածխաթթու գազի

ավելացմանը: Կենսաբազմազանության փոփոխությունը կարող է ունենալ բացասական ծանր հետևանքներ և անտառների դեգրադացիայի պատճառ է հանդիսանում: Իսկ անտառների հիդրոլոգիական ռեժիմի խախտումը հանգեցնում է ջրային էկոհամակարգերի դեգրադացմանը: Անտառահատումների արդյունքում փոխվում է գետերի հունը, որի հետևանքով ունենում ենք ջրի կորուստ: Անտառները պահպանում են աղբյուրները, վտակ-ները և գետակները գոլորշիացումից: Անտառների գերշահագործումը, անկանոն հատումները կրճատում են անտառային տարածքները, տեղի է ունենում տեսակային կազմի, կառուցվածքի փոփոխություններ, արժեքավոր տեսակների թիվի նվազում, բուսական և կենդանական պոպուլյացիաների կրճատում: Ներկայումս Հայաստանի բնական անտառների մոտ 70%-ը կազմալուծված ու ծերացած է:

**Այս խնդիրների կարևորությամբ է պայմանավորված թեմայի ընտրության արդիականությունը:**

Հոդվածի հիմնական **նպատակն է** բացահայտել անտառների պահպանման գործում եղած հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման ուղիները:

Ուսումնասիրությունները իրականացվել են ոլորտի ուսումնասիրության, նկարագրական, վերլուծական, վիճակագրական տվյալների ուսումնասիրության մեթոդներով: Արդյունքում ներկայացվել են ոլորտի իրավիճակը և արվել դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ:

**Գիտական նորույթը:** Հոդվածում ուսումնասիրվել է ՀՀ անտառների նշանակությունը կենսաբազմազանություն պահպանման գործում, ներկայացվել է մի շարք երկրների փորձը և գոյություն ունեցող խնդիրների լուծման ուղղությամբ արվել են հետևյալ առաջարկությունները.

- անտառը դիտարկելու և վերահսկելու համար օգտագործել նոր տեխնոլոգիաներ՝ օրինակ անօդաչու թռչող սարքեր,
- նպաստել «Կանաչ տնտեսության» համար անտառտնտեսության գործողություն-ների ծրագրի իրականացմանը,
- իրականացնել բազմաֆունկցիոնալ կառավարումն, որը հիմնված է տնտեսական, բնապահպանական և սոցիալական բաղադրիչների հավասարակշռության վրա,
- պատասխանատվություն կրել շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների համար,
- անտառային ռեսուրսների երկարաժամկետ կամ կարճաժամկետ օգտագործումը թույլ տալ միայն համապատասխան լիցենզիա ստանալուց հետո և ներդնել անտառների կառավարման սերտիֆիկատ:

**Բանալի բառեր:** Կլիմայի փոփոխիթյուն, շրջակա միջավայր, բնապահպանություն, անտառային տնտեսոթյուն, էկոհամակարգ, անտառահատումներ, անտառային ռեսուրսներ:

# ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ, СВЯЗАННЫЕ С СОХРАНЕНИЕМ ЛЕСОВ РА: ОБЗОР МЕЖДУНАРОДНОГО ОПЫТА

ГАЯНЕ АВАГЯН
ЛИАНА АЗАТЯН

**Аннотация**

Охрана биоразнообразия лесов. рек, растительных территорий влияет абсолютно все сферы жизни. Уничтожение или даже изменение небольшой части биоразнообразия может иметь серьезные негативные последствия. С точки зрения защиты климата леса играют важную роль как поглотители и защитники углекислого газа. Однако сокращение лесных площадей приводит к увеличению содержания углекислого газа в атмосфере. Изменение биоразнообразия может иметь серьезные негативные последствия и является причиной деградации лесов. А нарушение гидрологического режима лесов приводит к деградации водных экосистем. В результате вырубки лесов меняется русло рек, в результате чего мы имеем потерю воды. Леса защищают источники, притоки и ручьи от испарения.

Чрезмерная эксплуатация лесов, нерегулярные рубки сокращают площади лесов, происходят изменения видового состава и структуры, уменьшение количества ценных видов, сокращение популяций растений и животных. В настоящее время около 70% естественных лесов Армении деградировали и устарели.

**Важность этих вопросов определяет актуальность выбора темы.**

Основная **цель** статьи – выявить проблемы охраны лесов и предложить пути их решения.

Исследования проводились исследованием отрасли, описательными, аналитическими и статистическими методами. В результате была представлена ситуация в отрасли и даны рекомендации по решению проблем.

**Научная новизна.** В статье изучено значение лесов РА в сохранении биоразнообразия, представлен опыт ряда стран и даны следующие рекомендации для решения существующих проблем:

- использовать новые технологии, такие как дроны, для наблюдения и мониторинга леса,
- способствовать реализации плана действий лесного хозяйства для Зеленой экономики,
- осуществлять многофункциональное управление, основанное на балансе экономической, экологической и социальной составляющих,
- брать на себя ответственность за меры по охране окружающей среды,
- разрешать долгосрочное или краткосрочное пользование лесными ресурсами только после получения соответствующей лицензии и введения лесоустроительного сертификата.

**Ключевые слова.** Изменение климата, окружающая среда, защита окружающей среды, лесное хозяйство, экосистема, вырубка лесов, лесные ресурсы.

## THE MAIN ISSUES OF FOREST CONSERVATION IN ARMENIA: OBSERVATION OF INTERNATIONAL EXPERIENCE

GAYANE AVAGYAN
LIANA AZATYAN

**Abstract**

Forests, river preservation, vegetated areas, and biodiversity affect absolutely all spheres of life. Destroying or even changing a small part of biodiversity can have severe adverse consequences. From the climate protection perspective, forests play an important role as carbon dioxide absorbers. However, the reduction of forest areas leads to the increase of carbon dioxide in the atmosphere. Biodiversity change can have severe negative consequences and is the cause of the degradation of forests. And the violation of the hydrological regime of forests leads to the degradation of water ecosystems. As a result of deforestation, the course of rivers changes, resulting in water losses. Forests protect springs, tributaries, and streams from evaporation.

Overexploitation of forests and irregular felling reduce forest areas, changes in species composition and structure occur, and reduction of plant and animal populations happens. Currently, about 70% of Armenia's natural forests are degraded and old. The importance of these issues determines **the relevance of the research topic.**

**The article aims** to identify the issues in forest conservation and propose solutions. The field research, descriptive, analytical, and statistical method were used in the scope of the research.

**Scientific novelty:** the importance of RA forests in preserving biodiversity was studied, the experience of a number of countries was presented, and the following recommendations were made:

- use new technologies, such as drones, to monitor and control the forest,
- contribute to the implementation of the Forestry for Green Economy Action Plan;
- implement multifunctional management based on the balance of economic, environmental, and social components,
- take responsibility for environmental protection measures,
- allow long-term or short-term use of forest resources only with a license or introducing a forest management certificate.

**Keywords:** Climate change, environment, environmental protection, forestry, ecosystem, deforestation, forest resources.